Արձանագրություն հ.5

(նիստը գումարվել է 2021թ. սեպտեմբերի 6-ին)

Նիստին մասնակցում են կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 9-ը անդամներից 8-ը՝ 6-ը առկա,2 -ը՝ առցանց, բացակա՝ 1-ը:

Օրակարգում՝

1. «Երևանի Լ.Ազգալդյանի անվան հ.200 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի տեղի համար մրցույթ հայտարարելու մասին (զեկուցող՝ Կ.Դավթյան).

Լսեցին -1. Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմնական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահ Կ. Դավթյանը հաղորդեց, որ համաձայն « Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ» -ի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի դրույթների և 27.08.21թ. 1380-Ն որոշման՝ հայտարարվելու է մրցույթ: Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված,առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ, ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում:

Հիմք ընդունելով « Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ը հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ.-ի թիվ 319-Ն և 27.08.2021 թ.-ի թիվ 1380-Ն որոշումների սահմանված դրույթները՝ հաստատության կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Երևանի Լ. Ազգալդյանի հ. 200 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:
2. Խորհրդի նախագահը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն ձևի, որոշում կայացնելու օրվանից հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնի կրթության պետական կառավարման լիազորված մարմին:
3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել www.azdarar.am կայքում՝ և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:
4. Մրցույթն անցկացնել Լ.Ազգալդյանի անվ. հ.200 հիմնական դպրոցի շենքում 2021թ-ի հոկտեմբերի 13-ին, ժամը՝ 12:00:
5. Խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի հայտն ընդունի մրցույթ հայտարարած հաստատությունում՝ խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամների կողմից:
6. Հավակնորդների փաստաթղթերի ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Կ.Դավթյանի և քարտուղար Կ. Կարապետյանի վրա:
7. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվում են www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Հանձնարարել տնօրենին առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝
   1) ապահովել հավակնորդի հանդիպումը տվյալ հաստատության աշակերտական խորհրդի հետ՝ հաստատության զարգացման ծրագիր կազմելու համար՝ այդ մասին դիմելուց հետո
   2) 2) տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ հաստատության գործունեության վերաբերյալ՝ տվյալներ մանկավարժական, աշակերտական համակազմի, ուսումնադաստիարակչական, արտադպրոցական գործունեության, կառավարման և խորհրդակցական մարմինների մասին, ինչպես նաև հավակնորդի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա հաստատության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Խորհրդի նախագահ՝ Կ.Դավթյան

Քարտուղար՝ Կ. Կարապետյան